Դավիթ Մանուկի Մելքոնյան

Ծնվել է 1980 թվականի դեկտեմբերի 5-ին, Երևանքաղաքում:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

1997-2001թթ.	ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատ, ավարտել է գերազանցությամբ,
2001-2003թթ.	ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրա, ավարտել է գերազանցությամբ,
2003-2006թթ.	ԵՊՀ ասպիրանտուրա (ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոն),
2006թ.	թեկնածուական ատենախոսություն (թեմա՝ «Քրեական գործերով ապացույցներն անթույլատրելի ճանաչելու հիմքերն ու դատավարական կարգը»), ստացել է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան,
2009թ.	Իրավունքի և դիվանագիտության Ֆլետչերի դպրոց, ԱՄՆ, Միջազգային հարաբերությունների և իրավունքի ուսուցման ծրագիր:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

2006-2010թթ.	ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոն՝ դասախոս,
2010-2011թթ.	ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոն՝ դասախոս
2014թ.-մինչ օրս	ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոն՝ դոցենտ
2004-2006թթ.	ՀՀ ԱԺ, Եվրոպական կառույցներին ինտեգրման ժամանակավոր հանձնաժողով՝ փորձագետ,
2006-2014թթ	ՀՀ ԱԺ նախագահի խորհրդական, մեկ տասնյակից ավելի գործերով ՀՀ Սահմանադրական դատարանում ՀՀ ԱԺ ներկայացուցիչ,

2011-2014թթ.	Մարդու իրավունքների եվրոպական դատարան՝ ազգային իրավաբան,
2014-2016թթ.	ՀՀ գլխավոր դատախազություն, մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման վարչության պետ, 2015թ.-ից՝ ՀՀ դատախազության կոլեգիայի անդամ,
2016թ.-ի մարտի 9-- մինչ օրս	ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանում ՀՀ կառավարության լիազոր ներկայացուցչի տեղակալ,
2010թ.-մինչ օրս	ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը մշակող աշխատանքային խմբի անդամ:

Երեք գրքի և երեք տասնյակից ավելի գիտական հոդվածների հեղինակ և համահեղինակ է:

2015թ. հուլիսի 1-ին պարգևատրվել է ՀՀ վարչապետի հուշամեդալով:

Ամուսնացած է, ունի մեկ որդի: